

կիներս ոսմանթիք գրականության կը պատկանէին, թէ նորաձեւութենէ ինկած էին իրենց ընտանիքին, իրենց տունին-տեղին փարած, յաւիտենական սիրոյ մը կապուած կիները, անձնուիրութեան եւ պարկեշտութեան հերոսուհիները, որոնց տիպարը ճանչցուած է մասնաւորապէս հայուհին:

Այս դասանանքը Զօհրայինը եղած է մասնաւորապէս, ինքն է որ զայն քարոզած է ամէնէն առաջ մեր մէջ, քանի որ Արփիարի, Բաշալեանի, Կամսարականի հետ, սրանչելի տաղանդով մը անշուշտ, ինքն է որ հիմը դրած է իրապաշտ դպրոցին մեր մէջ եւ շարունակած է զայն:

Արդարեւ ամէն ազգի մէջ բացառիկ ուժեր պէտք են՝ նորութիւնները ընդունելի ընելու համար ժողովուրդին, որուն աւանդապահ ու տարամերժ դիրագգածութիւնը անընդունակ է օտար ու նորօրինակ երեւոյթներու: Զօհրային հզօր գրիչը միայն կրնար իր եզական հրապոյրներով սիրելի ընել մեզի Ֆլօպէռի գրականութիւնը:

Ի՞նչ է արդէն Իրապաշտ գրականութիւնը, երկու բառով, եթէ ոչ ֆիզիքական տիեզերքը մանրամասնօրէն տեսնելու եւ զայն առանց վերապահութեան նկարագրելու ազատութեան նուիրագործումը,– Բնապաշտ դպրոցին վրայ չեմ խօսիր, որովհետեւ Զօհրայ քնապաշտ գրագէտ մը եղած չէ երբեք: Մինչդեռ ոսմանթիքութեան գլխաւոր դերը եղած է նկարագրել ինչ որ չենք տեսներ, այլ զոր կը զգանք եւ կը գուշակենք մեր զգացման, մեր մտածումին համաձայն:

Վիպագիրներէն ոմանք արտաքին աշխարհն ու զգայութիւնները կը բացատրեն. իրապաշտներն են անոնք: Ոմանք զգացումներն ու մտածումները կը վերլուծեն. ոսմանթիքներն են ասոնք:

Եւ սակայն տգեղութիւններ նկարագրելու իրաւունքը չի վտարեր գեղեցկութիւնները արտայայտելու պարտականութիւնը:

Եւ չենք կրնար համոզուիլ որ իրապաշտ գրականութիւնը մեր մէջ մոտ գտած օրէն՝ անհետացած ըլլան մտքի եւ